

Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

Մեր ուսումնասիրած վայրի, բուն Լօռու տիպական տունը գլխառուցն է, որ յատուկ է նաև ամբողջ Ղարաբաղին: Սակայն այժմ այլ և ոչ ոք այս ձևի տուն չէ շինում, միայն եղածները փոքրիկ վերանորոգութիւններով պահւում են, և կամ սրանց մօտ նոր ձևի սենեակներ շինելով: սրանց գործ են ածում իբր խոհանոց և մառան:

Ոչմեան, նոր շինուող տները բաղկանում են քարաշէն 2—3 սենեակներից, բաւական մեծ պատուհաններով, առջևում փոքրիկ պատշգամբ: Կտուրը մեծ մասամբ կղմինտրածածք է լինում: Զատ քիչ տների մօտ կալ առանձին խոհանոց, այլ այս նպատակով մեծ մասամբ գործ են ածում հին գլխատունը կամ մի անկիւն, մի քանի փայտերով ծածկած: Պատահում են նաև երկնարկանի տներ, միայն տակաւ, և այն էլ առաւելապէս ձուլավէր և Քալալ-օղլի առաններում: Հին ձևի տները կիսագետնափոր են, անկանոն կերպով դասաւորուած, միայն բոլորի սրահները եւ սրահ մէջ բացւող գլխատան դուռը անցուց ղեպի արեւելք են դարձած. — մի մնացորդ էլ զրադաշտական կրօնի ազդեցութեան: Տները շինում են իրենք տանուտէրերը, երբեմն մի երկու վարպետ վարձելով և բարեկամներին օգնութեան հրաւիրելով:

Հին ձևի տները բաղկանում են հետեւեալ մասերից՝ սրահ, գլխատուն, միջանցուց, բոցրատուն և գոմ:

Սրահը տարածւում է գլխատան առաջ և լինում է նրա երկարութեան և 2—3 արշին լայնութեան: Երկու կողմում ձգւում են պատեր, երրորդը գլխատան պատն է, իսկ յորորդ կողմը բոլորովին բաց է և միայն մի քանի սիւներ ունի, որ պահպանում են հարթ կրտուրը: Սրահի մի պատի մէջ լինում է մի բուխարի, կողքերին երբեմն մի մի դարակ: Զատ անգամ այստեղ դրուած է լինում մի լայն, հասարակ մահճակալ: Ցաք եղանակներին տնեցիք մեծ մասամբ այստեղ են անցկացնում, գիշերներն էլ այլ տեղ քնում:

Գլխատունը գլխաւոր սենեակն է. որ միաժամանակ ծառայում է թէ իբր ընդունարան սեղանատուն, ննջարան, և թէ իբր խոհանոց և մառան: Սա լինում է կամ քառակուսի և կամ քառանկիւ-

նի, 2—3 աստիճան բարձրութեան: Ինքնատիպ և ուշադրութեան արժանին այս սենեակն ստղծմաբաւ կոչուած ճածկն է:

Սողոմաբաւ ճածկը լինում է քառակուսի սենեակի վրայ և բաղկացած է քառանկիւնի տաշուած գերաններից, որոնցից առաջին չորսը, որ կոչուում են ռաւորմի (թերևս առորմն) լանկում են ամէն մինը մի պատի և սրան կից բարձրացող երկու սիւնների վրայ, միւսները, որ ընդհանրապէս մայարասի են կոչուում, լենուելով ռաւորմների և միմեանց վրայ, աստիճանաբար մօտենում են միմեանց և կոնաձե բարձրանալով՝ մէջտեղում մի բացուածք թողնում, որ ճառալում է իբր միակ լուսամուտ: Արտաքուստ ճածկուած է նախ ջարջուով¹⁾ և ապա հողով ու մոխրով:

Սիւրմաբաւ ճածկը լինում է քառանկիւնի սենեակների վրայ և լանկում է պատերի և սրանցից երկու արշին հեռու կանգնեցրած չորս սիւնների վրայ: Նախ պատերի և սիւնների վրայ ձգուած գերանների վրայ մարդակներ դարսելով այս մասը հարթ ճածկում են, ապա մնացած մասը միմեանց վրայ քառանկիւնի գերաններ շարելով հետգնտէ նեղացնում են և մէջտեղից պատուհան, հերթիկ, թողնում:

Գլխատան մէջ տեղում կառւի (հերթիկ) տակ գտնւում է օրթօջաղը (մ'ջին վառարանը)—փոքր ինչ փոսացած տեղում մի եռոտանի (կասկաղէնք) կամ առաւելապէս՝ նրան փոխարինող երկու քար է դրուած: Պատերից մինում մի ներս անկուածք կալ, յատկապէս ճալքի համար շինուած. այստեղ սովորաբար դարսուած է լինում մաֆրաշը, թաղի բները, գորգերը (խալիլա), ձնձերը (կապերտ), տեղաշորը, բարձերը և այլն, և այս բոլորը ճածկուած են մի ձուլձով:

Սիւս պատի մէջ գտնւում է քերէքը, երեքից հինգ երկար տախտակներ միմեանցից կ'ս արշին բարձրութեամբ երկարացրած են, որոնց վրայ շարուած են մեծ և փոքր պղինձներ (կաթսաներ), քաւեր, մարլաբաներ, սիւնիներ, նալբալիներ, քաւաներ, բաղիւսներ, փաւ քաւիլ, կրիլ, քիֆեիներ, խոնչաներ:— Դէրէկի կողքին քարէ է արած գղալմանը՝ մէջը գղալների ածած թէրէքի տակը շարուած են կնուճներ:

Օրորոր պատի մօտ դրուած է փայտէ շտեմարանը—ամբար, ուր սովորաբար պահւում է ցորեն: Սրա մօտ, դէպի դուռը, շարուած են փայտէ և պղնձէ ջրի կմեր, փարչեր, դաբղաբայ թուլայ, գիւզիւմ և այլն: Դռան միւս կողմում ընկած է կեռը, քարակիւր, տանիուրները, կացիներ, պատից կախուած է ակիւր, անկիւնում դրուած է նազրա-

¹⁾ Զարբուծ լինում է կամ հին փայցած խոտ, կամ մանգաղով հնձած արտերում մնացած ծղօտ, որ լետեչ գերանդիով հնձում են, կամ կտաւատի ծղօտները, որ լեն կալում և որը կոչւում է բէլմ և կամ ճառճալին մի տեսակ խոտ որ կոչւում է ճըլ:

բը վերան երկաթէ և թիթեղէ ճրագներ: Զորորդ կողմում շարուած են քրոցներ ալիւրով լի, կորեք՝ հացահատիկներով, իւզով, պանրով լի, բաճապիսեք՝) որոնց վրայ դնում են բարձր՝ պառկելիս:

Միջնառանը կից է գլխատանը, որի մէջ բացւում է սրա միակ դուռը. սա մի փոքրիկ սենեակ է, հարթ կտուրով, շատ անգամ առանց պատուհանի, միայն միջանիսի մէջ կտրոււմ կամ պատի մէջ թողնուած մի ծակից լոյսը թափանցում է ներս: Այս սենեակը երբեմն ծառայում է նորապսակների համար իբր ննջարան և շատ անգամ իբր միջերանոց:

Թոնբառանը, որ շատ անգամ գլխատնից փոքր ինչ հեռու և նրանից առանձնացած է լինում, սիւրմաբաւ մի շէնք է, մի մեծ հերդիկով: Գրեթէ մէջ տեղում թաղուած է թոնիբը, մի քանիսի մէջ կայ նաև փուռ: Այստեղ դրուած են լինում ծառք, մաղը, հացի գանդուկը (արկը), սեղանաճախակը, գրչակը, ռախաբէն, ալիւրի բլրոցները և այլն:

Ցանը կից է գոմը, որ երբեմն ոչ թէ մէկ, այլ երկու, երեք հատ է լինում, նայած գերդաստանի ունեցած անասունների թուին: Պատահում է, որ գոմի մի ծալքում օդայ է լինում, ինչպէս այս սովորական է Ծալկայում և Քաւախքում—կարնոց գաղթականների մէջ—սակայն սա բացառութիւն է, շրջակայ անտառների շնորհիւ այս ժողովուրդը ստիպուած չէ անասունների հետ ապրել, նրանց տաքութիւնից օգտուելու համար:

Ցան առաջ կամ կողքին տարածւում է կալը, որ թեղի ժամանակ արձակած փոշիով լցնում է ամբողջ տունը և մարդկանց թոքերը: Սրա կողքին բարձրանում է խոտի գէղերը, իսկ մի քիչ հեռու՝ անասունների աղբի կոյտը. որ իւր գարշահոտութեամբ ապականում է օդը: Սակայն փոքրի շատէ չառաջագիմած գիւղերում, ինչպէս օր. Ուզունլարում, Դսեղում, այս կոյտերը երկար չեն մնում, այլ ձմեռանը՝ գարունը, իսկ ամբանը՝ աշնանը սալներով կրում են վարելահողերը պարարտացնելու: Կալի մօտ գտնւում է նաև յարգանոցը, որ սովորաբար գետնափոր է լինում, կալից ցածր, որպէս զի հեշտութեամբ կարելի լինի չարդը կալից նրա կտրուվը ներս ածել:

Ցան առաջ լինում են մի քանի գետնափոր հորեր, ցորեն, գարի, հաճար պահելու:

Մի քանի տների մօտ լինում են նաև հաւանոցներ, սակայն ընդհանրապէս հաւերին զոմբրում են պահում և առանձին հաւանոցներ չեն շինում:

Մի քանի տների մօտ էլ պատահում են շների բներ:

1) Այստեղ լիշուած բոլոր իրերը կընկարագրուեն իրենց տեղերում: